ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ 2

Երկիր՝	Հայաստանի Հանրապետություն
Ծրագրի անվանումը՝	«Հայաստանի դիմակայուն լանդշաֆտներ» դրամաշնորհային, ծրագիր
Պայմանագրի անվանումը՝	Լոռի մարզում անտառների վերականգնման աշխատանքներ
Ծրագիր No.:	P179988
ՀՆՀ No.՝	AM-EPIU-516211-CW-RFB

Հարգելի հավանական հայտատու(ներ),

Տեղեկացնում ենք, որ ընթացիկ մրցութային գործընթացի շրջանակում ստացել են պարզաբանման հարցումներ հավանական հայտատուներից: Վերոնշյալ հարցումների կապակցությամբ պատրաստվել են համապատասխան պարզաբանումներ (պատասխաններ): Ստորև ներկայացվում է բարձրացված հարցերը՝ համապատասխան պատասխաններով.

ՀԱՐՑՈՒՄ1

1. Քանի որ մրցույթը իրենից ներկայացնում է ոչ միայն ծառատնկման աշխատանքներ, այլ նաև պլանի կազմում, օդալուսանկարահանում, մոնիթորինգ, հետագա սպասարկում, խնամք և այլն, խնդրում ենք պարզաբանել.
   - Կոնսորցիումի անդամներից մեկի կողմից կատարված օդային սրսկումների միջոցով անտառների պաշտպանության աշխատանքները համարվու՞մ են նմանատիպ:
   - Նմանատի՞պ են համարվում կոնսորցիումի նույն մասնակցի կողմից անտառների կառավարման պլանների մշակումը (նշված ընթացակարգում պլանի կազմում նախատեսված է):

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ1

Համաձայն մրցութային փաստաթղթերի՝
«Համանման է համարվում այն պայմանագիրը կամ նախագիծը, որը իր բնույթով համադրելի է առաջարկվող աշխատանքների հետ՝ բարդության, կիրառված մեթոդների և տեխնոլոգիաների տեսանկյունից»:
Մասնավորապես, որպես համապատասխան փորձ կարող են դիտարկվել այն աշխատանքները, որոնք ներառում են անտառային կամ հարակից ոլորտներում իրականացված միջոցառումներ, ինչպիսիք են՝ անտառատնկում, վերականգնում, խնամք, ցանկապատում, սերմերի հավաքում, տնկիների արտադրություն, ինչպես նաև այլ համարժեք գործունեություններ:

ՀՁ-ի պարագայում անդամները պետք է բավարարեն այդ պահանջին համատեղ և դրա հետ մեկտեղ գոնե մեկ անդամ պետք է բավարարի հատուկ պայմանագրի կառավարման փորձին

ՀԱՐՑՈՒՄ2

2. Հրավերում նշված են անտառվերականգնման աշխատանքների վայրերը՝ ըստ անտառպետությունների և հարակից բնակավայրերի: Արդյո՞ք ընտրված են ստույգ տարածքները և առկա են դրանց թվային ֆայլերը (kml, shp)՝ տարածքներն ուսումնասիրելու համար:

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ2

Այո՛, տարածքները նախնական ընտրվել են՝ համապատասխան ուսումնասիրությունների և գնահատումների հիման վրա: Տեխառաջադրանքում նշված է, որ վերջնական հստակեցումները և տեղանքի հետ կապված մանրամասն աշխատանքները պետք է իրականացվեն կապալառուի կողմից՝ համաձայն տեխառաջադրանքի պահանջների: Մասնավորապես, կապալառուն պարտավոր է տեղում իրականացնել լրացուցիչ ուսումնասիրություններ, ճշգրտումներ և անհրաժեշտ չափագրումներ՝ ապահովելու համար աշխատանքների արդյունավետ և պահանջներին համապատասխան իրականացումը:

Հարգանքով՝
Արմեն Եսոյան
ԲԾԻԳ ՊՀ-ի տնօրեն
«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ»
պետական հիմնարկի (ԲԾԻԳ ՊՀ)
Հեռ.՝ +374 96 693 911